«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություններ (հրավերը կցվում է):

Սույն հրավերի ծածկագիր է հանդիսանում՝ ՏԲՎՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4:

Գնման առարկա է հանդիսանում «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար Արարատի մարզում հեռուստատեսային ծառայությունների գնումը/նկարագիրը՝ ըստ կից ներկայացվող բնութագրի/:

ՏԲՎՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4 ծածկագրով գնումներին կարող են մասնակցել իրավասու մարմնի կողմից տրված 2015 թվականի ողջ ժամանակահատվածում եթերային հեռարձակում իրականացնելու թույլտվություն (լիցենզիա) ունեցող, սփռումը Արարատի մարզի վարչական տարածքը ներառող, հեռուստահաղորդումների անխափան հեռարձակումն ապահովող համապատասխան սարքավորումներով տեխնիկապես հագեցված եթերային հեռարձակում իրականացնող կազմակերպությունները :

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով (օրինակելի ձևերը կցվում են):

Ընթացակարգի հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով լիովին կհամապատասխանի հրավերով ներկայացվող պահանջներին և կառաջարկի լավագույն գինը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1, 4-րդ մասնաշենք, էլ. հասցե՝ info@gov.am) հասցեով մինչև 2015 թվականի փետրվարի 13-ը, ժամը 14.00-ն: Մասնակիցը հայտին պետք է կցի իրավասու մարմնի կողմից տրված 2015 թվականի ողջ ժամանակահատվածում եթերային հեռարձակում իրականացնելու թույլտվության /լիցենզիայի/ պատճենը:

Գնման հայտերը կբացվեն սույն թվականի փետրվարի 13-ին, ժամը 14.00-ին՝ Պատվիրատուի գտնվելու վայրում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1, 4-րդ մասնաշենք, 1-ին հարկ, սենյակ 2:

Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն բացվի, իսկ սույն հրավերով ներկայացված պահանջներին հակասող կամ օրենքի խախտմամբ ներկայացված հայտերը չեն քննարկվի:

Ընթացակարգին վերաբերող Ձեր հարցերը կարող եք ուղղել Պատվիրատուի info@gov.am էլեկտրոնային փոստին:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ թվով 3 հավելվածներով, դիմումի և գնի առաջարկների օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն՝ Տ. Աբրահամյան

ՏԲՎՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Դ Ի Մ Ո Ւ Մ

________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
*Ընթացակարգի մասնակցի անվանումը*
«Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից N _________________________ ծածկագրով հայտարարված ընթացակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
_______________________________-ն հայտնում և հավաստում է, որ համապատասխանում է
*Ընթացակարգի մասնակցի անվանումը*
հրավերով ներկայացվող պահանջներին և չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն, ինչպես նաև հայտարարում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
*Ընթացակարգի մասնակցի անվանումը*
_____________________________________________________-:
*Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե*

Տնօրեն՝ ____________________________________

Կ.Տ.

ՏԲՎՏԿ/1-ԾՀԾՁԲ- 11/4 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՏԲՎՏԿ/1-ԾՀԾՁԲ- 11/4 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

______________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

*Ընթացակարգի մասնակցի անվանումը*

համաձայն հետևյալ գների՝
(ՀՀ դրամ)

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը* | Արժեք** | ԱԱՀ*** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | Հեռուստատեսային ծառայություններ | | | |

** Գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ծառայությունները դիտարկելով որպես մեկ ամբողջություն՝ ժամանակացույցով ներկայացված ամիսների մեկ ընդհանուր հաշվարկով: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի ծառայության միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:*
*** 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

______________________________ ______________
*Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)* *(ստորագրությունը)*

Կ. Տ.

______________________2015թ.
*(ամսաթիվը, ամիսը)*

Նախագիծ

**Արարատի մարզում հեռուստատեսային ծառայությունների**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՏԲՎՏԿ/1-ԾՀԾՁԲ- 11/4**

ք. Երևան "-------"-------------------- 2015թ.

«Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Տ. Աբրահամյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «.........................», ի դեմս ընկերության տնօրեն ...............-ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը մատուցում է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ծառայությունների ամբողջությունը (այսուհետև՝ Ծառայություն) իսկ Պատվիրատուն վճարում դրա դիմաց:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին և ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը, ինչպես նաև պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ

Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Ծառայությունը մատուցել պատշաճ, սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններին համապատասխան՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ______ (____տառերով____________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության արդյունքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին և ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ ա տ վ ի ր ա տ ու　　　　　　Կ ա տ ա ր ո ղ

*Հավելված թիվ 1*
*"---------"------------------------------ 2015թ.*
*կնքված ծառայությունների մատուցման*
*թիվ ՏԲԿՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4 գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ |
| --- |
| Գնման ենթակա հեռուստատեսային ծառայությունն իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունների ամբողջությունը.<br><br>ա) Հեռուստառեպորտաժի պատրաստում.<br>Կատարողը պետք է պատրաստի մինչև 4 (չորս) րոպե տևողությամբ կառավարության գործունեությունը, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող ծրագրերը լուսաբանող ամսեկան թվով 8 ռեպորտաժ: Ռեպորտաժի պատրաստումն իր մեջ ներառում է նկարահանման, մոնտաժման, համակարգչային ձևավորման և այլ անհրաժեշտ աշխատանքների կատարումը, որոնք ապահովում են ամբողջական, հեռարձակման համար պիտանի և սովորաբար դրան ներկայացվող պահանջներին բավարարող ռեպորտաժի ստացումը: Ռեպորտաժները պետք է պատրաստվեն հեռուստալրագրական արդյունավետ մեթոդների կիրառմամբ, այնպես որ ապահովվեն դրա բովանդակային հագեցվածությունը: Ռեպորտաժների թեմաները և ցուցադրման օրը նախապես համաձայնեցվելու են Պատվիրատուի հետ:<br>բ) Հեռարձակում.<br>Կատարողը պետք է իրականացնի սույն տեխնիկական բնութագրի «ա» ենթակետով սահմանված ռեպորտաժի հեռարձակումը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում՝ Պատվիրատուի կողմից տրամադրվող, առավելագույնը 25 րոպե տևողությամբ, ամսեկան ոչ ավել, քան մեկ հեռուստահաղորդման հեռարձակում: |

***Ծանոթություն.*** *ծառայությունները պետք է մատուցվեն անմիջապես Կատարողի կողմից:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՏԱՐՈՂ**

*Հավելված թիվ 2*
*“----------”------------------------------ 2015թ.*
*կնքված ծառայությունների մատուցման*
*թիվ ՏԲՎՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4 գնման պայմանագրի*

# ԳՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գնման ժամանակացույց | - | - | | | | | | | | | | |
| Վճարման ժամանակացույց | - | - | -----% | -----% | -----% | -----% | -----% | -----% | -----% | -----% | -----% | -----% |

*Հավելված թիվ 3*
*“---------”------------------------------ 2015թ.*
*կնքված ծառայությունների մատուցման*
*թիվ ՏՔՎՏԿ/1-ՇՀԾՁԲ- 11/4 գնման պայմանագրի*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

“....” ......... 20 թ.
Պայմանագրի անվանումը՝ ..........................
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ “....” ............ 20 թ.
Պայմանագրի համարը՝ ...........................
Պատվիրատուն, ի դեմս______________________________ և Կատարողը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները և ծառայությունները/այսուհետև՝ ծառայություններ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը “....” ......... 20 թ-ից “....” ........... 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ծառայության մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Ընդամենը** | ---------- | ---------- | | ------- |

Վերոհիշյալ Ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը ընդունեց

Ծառայությունը հանձնեց